Հավելված

ՀՀ կառավարության 2011 թվականի
հունվարի 20-ի N 62 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՎԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է օտարերկրացիներին ուղղված հրավերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից հաստատվելու և հաշվառվելու կարգը։

2. Նախարարությունը հաստատում է օտարերկրացիներին ուղղված հրավերները, որոնք կարող են տալ «Օտարերկրացիների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված մարմինները։

3. Նախարարության հաստատմանը ներկայացվող հրավերները պետք է պարունակեն հետևյալ տվյալները՝

1) հրավիրվողի անունը, երկրորդ անունը (առկայության դեպքում), ազգանունը.

2) հրավիրվողի քաղաքացիությունը, սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը (երկիր, նահանգ (մարզ), քաղաք), էթնիկ պատկանելությունը (տվյալի առկայության դեպքում).

3) հրավիրվողի բնակության վայրը (հասցեն՝ երկիր, նահանգ (մարզ), քաղաք), հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում).

4) հրավիրվողի զբաղմունքը, աշխատանքի վայրը.

5) հրավիրվողի անձնագրի տեսակը, սերիան և համարը, անձնագիրը տալու և դրա վավերականության ժամկետները, անձնագիրը տրամադրող մարմինը.

6) հրավերի նպատակը.

7) Հայաստանի Հանրապետությունում գտնվելու նախատեսվող ժամկետը.

8) պահանջվող մուտքերի թիվը.

9) տեղեկատվություն հրավիրվողի կողմից հրավիրվողի կեցության, հնարավոր բուժօգնության և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու հետ կապված ծախսերը հոգալու կամ պարտավորություն այդ ծախսերը հրավիրողի կողմից հոգալու մասին.

10) հրավիրողի տվյալները։

4. Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք նախարարություն են ներկայացնում՝

1) հրավեր՝ համաձայն N 1 ձևի։ Հրավերը պետք է տպված լինի իրավաբանական անձի ձևաթղթի վրա և ստորագրված՝ իրավաբանական անձի ղեկավարի կողմից.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության տված գրանցման վկայականի պատճենը՝ առաջին անգամ հրավեր ներկայացնելու դեպքում.

3) պետական տուրքի վճարման անդորրագիր՝ «Պետական տուրքի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով։

5. Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները հրավերը նախարարություն են ներկայացնում գրության, իսկ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները, հյուպատոսական հիմնարկները և միջազգային կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչությունները՝ հայտագրի տեսքով, որոնք պետք է պարունակեն սույն կարգի 3-րդ կետում նշված տվյալները։

6. Հրավերը և կից փաստաթղթերը նախարարությունում ընդունվում և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրավերի ճշտությունն ստուգվելուց հետո անմիջապես հաշվառվում են հրավերների էլեկտրոնային հաշվառման գրանցամատյանում՝ համաձայն

N 2 ձևի։ Եթե հրավերը թերի է կամ սխալ, նախարարությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է հրավիրողին՝ նշելով թերությունները և սխալները։

7. Հրավերների էլեկտրոնային հաշվառման գրանցամատյանում հաշվառվելուց հետո հրավիրվողի և հրավիրողի տվյալները նախարարության կողմից անմիջապես մուտքագրվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից (այսուհետ՝ ազգային անվտանգության ծառայություն) վարվող վիզային ավտոմատացված համակարգ։

8. Ազգային անվտանգության ծառայությունը 7 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է «Օտարերկրացիների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասում նշված հիմքերի հնարավոր առկայությունը և համապատասխան եզրակացություն է ներկայացնում նախարարություն։ Լրացուցիչ ստուգումներ պահանջող դեպքերում 7 աշխատանքային օրվա ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 15 աշխատանքային օր, և դրա մասին գրավոր տեղեկացվում է նախարարությանը։

9. Սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված իրավաբանական անձանցից հրավերի ստացման դեպքում ազգային անվտանգության ծառայության եզրակացության հիման վրա նախարարությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում իրավաբանական անձին գրավոր տեղեկացնում է հրավերը հաստատելու կամ մերժելու մասին։

10. Սույն կարգի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված մարմիններից հրավերի ստացման դեպքում, ազգային անվտանգության ծառայության եզրակացության հիման վրա, նախարարությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում տվյալ մարմնին գրավոր տեղեկացնում է հրավերը հաստատելու կամ մերժելու մասին։ Ազգային անվտանգության ծառայությունը բացասական եզրակացություն է տալիս «Օտարերկրացիների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում։ Հայաստանի Հանրապետության համապատասխան

դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը նշված տեղեկատվության մասին իրազեկվում է վիզային ավտոմատացված համակարգի միջոցով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Հ Ր Ա Վ Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀՅՈՒՊԱՏՈՍՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

_____ , ՀՀ արդարադատության նախարարության պետական
(կազմակերպության անվանումը)

ռեգիստրի գործակալության գրանցման ծածկագիրը՝ _____ ,

սույն հրավերով _____ _____ 20___ թ. մինչև ____ _____ 20___ թ. _____

նպատակով Հայաստանի Հանրապետություն է հրավիրում հետևյալ օտարերկրացուն (քաղաքացիություն չունեցող անձին) *(հրավիրվող անձի մասին պահանջվող անձնական տվյալները (շարադրել ստորև ներկայացված հերթականությամբ, լատինատառ)* ՝

1) ազգանունը.
2) անունը.
3) երկրորդ անունը (առկայության դեպքում).
4) անձնագրի տեսակը.
5) անձնագրի սերիան և համարը.
6) ում կողմից է տրվել անձնագիրը (տվյալի առկայության դեպքում).
7) անձնագիրը տալու և դրա վավերականության ժամկետները.
8) քաղաքացիությունը.
9) հեռախոսահամարը (առկայության դեպքում).
10) զբաղմունքը, աշխատանքի վայրը.
11) սեռը.
12) ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.
13) ծննդավայրը (երկիր, նահանգ (մարզ), քաղաք).
14) բնակության վայրը (հասցեն՝ երկիր, նահանգ (մարզ), քաղաք).
15) էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում).
16) էթնիկ պատկանելությունը (տվյալի առկայության դեպքում)։

Խնդրում ենք հաստատել հրավերը և տրամադրել Հայաստանի Հանրապետություն եզակի (բազմակի) *(նշել մուտքերի անհրաժեշտ թիվը)* մուտքի վիզա _____-ում Հայաստանի Հանրա-
(ՀՀ ներկայացուցչության վայրը)

պետության դեսպանությունում (հյուպատոսությունում)։

Հայտնում ենք, որ հրավիրվողի կեցության, հնարավոր բուժօգնության և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու հետ կապված ծախսերը հոգում է հրավիրվողը (հրավիրողը) *(նշել անհրաժեշտ տարբերակը՝ ըստ ծախսի նպատակի)*։

Ձև N 2

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Ց Ա Ն

ՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Գրանցման հերթական համարը	Հրավերը ՀՀ արտաքին գործերի նախարարությունում ստանալու օրը, ամիսը, տարեթիվը	Հրավիրողը	Հրավիրվողի ազգանունը, անունը	Հրավիրվողի քաղաքացիությունը	Վիզաների ավտոմատացված համակարգ տվյալների մուտքագրման օրը, ամիսը, տարեթիվը	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության եզրակացությունը (դրական կամ բացասական)	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից եզրակացությունը տալու օրը, ամիսը, տարեթիվը	Նշումներ
1	2	3	4	5	6	7	8	9